ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 1-ին փողոցն անվանակոչել հայ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի անվամբ՝ «Հովհաննես Գրիգորյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հովհաննես Գրիգորյանը ծնվել է 1945 թ. Գյումրիում: Գրել և տպագրվել սկսել է դեռևս դպրոցական տարիներից: Բանաստեղծությունների առաջին՝ «Երգեր առանց երաժշտության» ժողովածուն հրատարակվել է 1975 թ.: Բանաստեղծական ժողովածուներն են՝ «Երգեր առանց երաժշտության» (1975), «Բոլորովին ուրիշ աշուն» (1979), «Անձրև մի տխուր առիթով» (1982), «Դանդաղ ժամեր» (1986), «Հրեշտակներ մանկության երկնքից» (1992), «Երկու ջրհեղեղի արանքում»(1996), «Կես ժամանակ» (2002), «Գիշերահավասար» (2006), «Երբեք չմեռնես – ահա թե ինչ կասեմ քեզ» (2010): 2004-ին լույս տեսավ նրա արձակ առաջին՝«Մաեստրո» գիրքը, իսկ 2008-ին՝ էսսեների և հոդվածների «Բաց դռների օր Միերի քարայրում» ժողովածուն: Իսպաներենից թարգմանել է Կ. Ֆուենտեսի «Արտեմիո Կրուսի Մահը»(1979թ.), Խ.Կորտասարի «Վիճակախաղ» (1983 թ.) վեպերը, Խ. Օրտեգա-Ի-Գասեթի «Մշակույթի փիլիսոփայություն» (1999թ.) էսսեների ժողովածուն, Ֆ. Դե Ռոխասի «Սելեստինա» (2007 թ.) դրաման: Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Առանձին գրքերով թարգմանաբար լույս են տեսել Ռուսաստանում («Չուղարկված նամակներ», 1985թ.), Ֆրանսիայում («Constitution», 2007թ.), Իրանում՝(«Բոլորովին ուրիշ աշուն» 2009 թ.): Հովհաննես Գրիգորյանը մի շարք գրական մրցանակների դափնեկիր է: 1998 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով: 2011թ.-ին Հովհաննես Գրիգորյանն արժանացել է ՀՀ պետական մրցանակի գրականության և հրապարակախոսության ոլորտում իր «Երբեք չմեռնես, ահա թե ինչ կասեմ քեզ» գրքի համար: Մահացել է 2013թ.-ի փետրվարի 7-ին, Երևանում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի

N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Հովհաննես Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ